

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԹՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԹՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ կետերով.

3.1) **պատճեն**՝ ձեռագիր կամ տպագիր փաստաթղթի բնօրինակի պատկերի ճշգրիտ կամ հարաբերականորեն ճշգրիտ վերարտադրությունը թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա.

3.2) **Էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակ՝** նյութական կրիչի վրա **Էլեկտրոնային եղանակով գրանցված տեղեկատվություն, եթե Էլեկտրոնային փաստաթուղթը փոփոխության չի ենթարկվել այն պահից, երբ այն տրվել է պահպանության.**

3.3) **Էլեկտրոնային փաստաթղթի պատճեն՝ Էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակի վերարտադրությունը թղթային կրիչի վրա:»:**

Հոդված 2. Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Քրեական գործի կամ քրեական գործի նյութերի կորստի, վնասման կամ ոչնչացման դեպքում համապատասխանաբար վերադաս դատախազը կամ դատարանը որոշում է կայացնում դրանք վերականգնելու մասին և միջոցներ ձեռնարկում քրեական գործով վարույթի պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ:

Քրեական գործի կամ քրեական գործի նյութերի վերականգնումը կատարվում է գոյություն ունեցող ձեռագիր կամ տպագիր կամ էլեկտրոնային փաստաթղթերի բնօրինակներից պատճեններ հանելով կամ քննչական և այլ դատավարական գործողությունները կրկին կատարելով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «կորցրած վարույթի վերականգնման» բառերը փոխարինել «քրեական գործի կամ քրեական գործի նյութերի կորստի, վնասման կամ ոչնչացման» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հանրապետության նախագահ

Ա. Սարգսյան

2021թ. _____

Երևան

ՀՕ- -Ն